ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1961 Общественные науки

Կ. Պ. Պոստնիկովա

ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ծրագրի նախագծի մեջ նշվում է. «Հզոր արդյունաբերության հետ մեկտեղ ծաղկուն, բազմակողմանիորեն զարգացած և բարձր մթերատու գյուղատնտեսության ստեղծումը կոմունիզմի կառուցման պարտադիր պայմանն է»: Գյուղատնտեսության վերելքի գլխավոր ուղին նրա հետևողական ինտենսիֆիկացումն է, որը նշանակում է հասնել հողագործության և անասնաբուծության բարձր կուլտուրայի, շեշտակիորեն բարձրացնել բոլոր կուլտուրաների բերքատվությունը և ավելացնել արտադրանքի ստացումը հողի յուրաքանչյուր հեկտարից՝ ծախսումների բառ ամենայնի խնայողությամբ:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման կարևորագույն ռեզերվներից մեկը հողային ռեսուրսների լրիվ և ճիշտ օգտագործումն է: Դեռևս ՍՄԿՊ XXI համագումարում նշվեց, որ անհրաժեշտ է մեծ չափերով լավացնել հողի՝ որպես գյուղատնտեսության հիմնական արտադրամիջոցի օգտագործումը:

Այդ տեսակետից մեծ նշանակություն ունի ոչ միայն հողի տնտեսական օգտագործման մակարդակի բարձրացումը, այլև հողային ֆոնդի ընդլայնումը այժմ չօգտագործվող հողերը տնտեսական շրջանառության մեջ ընդգրկելու միջոցով: Վերջին հանգամանքն առանձնապես կարևոր է մեր ռեսպուբլիկայի համար, որտեղ լեռնային ռելեֆի պատճառով գյուղատնտեսական օգտագործման համար պիտանի հողերի ֆոնդը խիստ սահմանափակ է: Բավական է ասել, որ գյուղատնտեսական հանդակների[1] տարածությունը կազմում է մեր ռեսպուբլիկայի ամբողջ տերիտորիայի 48 տոկոսը, որի կեսն ընկնում է արոտավայրերին: Այնուհետև այդ տերիտորիայի շուրջ 11 տոկոսը ընկնում է անտառներին և թփուտներին, մնացած 41 տոկոսը պիտանի չէ գյուղատնտեսական օգտագործման համար: Հայկական ՍՍՌ-ում բնակչության մեկ շնչին և կոլտնտեսային մեկ տնտեսությանն ընկնող վարելահողերի տարածությունը ՍՍՌՄ-ի միջինից երեք անգամով պակաս է: Ուստի հողի յուրաքանչյուր հեկտարը ռեսպուբլիկայում պետք է հաշվի առնվի, պետք է օգտագործվեն հողերի պահպանման և նրանց բերրիության բարձրացման բոլոր հնարավորությունները:

Կենսագործելով ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան պլենումի որոշումները, մեր ռեսպուբլիկան զգալի նվաճումներ է ձեռք բերել գյուղատնտեսության զարգացման բնագավառում: Զգալիորեն ավելացել է կաթի, մսի, ձվի, ինչպես նաև խաղողի և տեխնիկական կուլտուրաների արտադրությունը: Սա-

---

[1] Գյուղատնտեսական հանդակների մեջ մտնում են վարելահողեր, խոտհարքներ, բազմամյա պտղատու տնկարկներ, խոտհարքներ և արոտավայրեր:

կայն հողային ռեսուրսների ավելի լրիվ և ռացիոնալ օգտագործման դեպքում այդ նվաճումներն ավելի մեծ կարող էին լինել։ Պետք է նշել, որ այդ տեսակետից մեզ մոտ դեռևս կան որոշակի թերություններ։ Հայկական ՍՍՌ-ում վերջին տարիների ընթացքում (1953—1960) տեղի է ունեցել գյուղատնտեսական հանդակների կրճատում։ Այսպես, օրինակ, մեր ռեսպուբլիկայում վարելահողերի ընդհանուր տարածությունը կրճատվել է շուրջ 100 հազար հեկտարով, (Նույնիսկ եթե նկատի ունենանք, որ նրանց մի մասն օգտագործվել է բաղմամյա տնկումների համար), բնական արոտավայրերի տարածությունը՝ 140 հազար հեկտարով, 1960 թ. ցանքային տարածությունները ավելի քան 140 հազար հեկտարով պակաս են եղել, քան 1953 թ.։

Հողատարածությունների այդպիսի կրճատումը տեղի է ունեցել հետևյալ պատճառներով։ ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1955 թ. մարտի 9-ի որոշմամբ սահմանված գյուղատնտեսության պլանավորման նոր կարգը, որը կոլտնտեսություններին և սովխոզներին ավելի մեծ նախաձեռնություն է տալիս արտադրության պլանավորման հարցերում, միաժամանակ հնարավորություն տվեց կարգավորել հողերի օգտագործումը։ Քանի որ հողերի էքսպլիկացիան կազմվել էր տարիներ առաջ և մի շարք շրջաններում ու կոլտնտեսություններում զգալիորեն տարբերվում էր նրանց փաստացի օգտագործումից, 1956 թ. ռեսպուբլիկայում անցկացվեց հողերի գույքագրում։ Հողատարածությունների այն մասը, որի վրա գյուղատնտեսական արտադրությունը տնտեսապես արդյունավետ չէր, կամ էլ, որոնց օգտագործումը հակասում էր հողի բերրիության պահպանման պահանջներին, և վերջապես էռոզիայի ենթարկված հողերը, դասվեցին «ոչ պիտանի» հողերի կարգը։

Միաժամանակ, ինչպես նշվեց, 1959 թ. ՍՄԿՊ Կենտկոմի Դեկտեմբերյան պլենումում, գյուղատնտեսական հանդակների և ցանքատարածությունների կրճատումը տեղի էր ունեցել նրանց անտնտեսվար օգտագործման հետևանքով։ Գյուղատնտեսական հանդակների զգալի կրճատում տեղի ունեցավ Հյուսիս-արևելյան անտառային գոտում։ Այսպես, Ալավերդու և Իջևանի շրջաններում միայն վերջին չորս տարիների ընթացքում (1955—1959) գյուղատնտեսական հանդակների ընդհանուր տարածությունը կրճատվեց 20 տոկոսով, իսկ արոտավայրերինը՝ 28 տոկոսով։ Այս գոտում անտառների չափից ավելի հատման հետևանքով, հողերի զգալի տարածություններ ենթարկվեցին էռոզիայի։ Թալինի շրջանում այդ նույն ժամանակամիջոցում արոտավայրերի ֆոնդը կրճատվեց մեկ երրորդով, հիմնականում՝ ցածր բերքատու ձմեռային արոտավայրերը «ոչ պիտանի» հողերի կատեգորիային դասվելու հետևանքով[2]։

Հայաստանի սակավահողության պայմաններում գյուղատնտեսական հանդակների և ցանքատարածությունների հետագա կրճատումը տնտեսապես չի արդարացվում։ Գիտահետազոտական մի շարք ձեռնարկություններ և գյուղատնտեսական բուհեր պետք է ուսումնասիրեն ռեսպուբլիկայի հողային ֆոնդերի պահպանման, ավելի լավ օգտագործման հնարավորությունները և այդ ուղղությամբ մշակեն կոնկրետ միջոցառումներ, որպեսզի դադարեցվի հողերի «դուրս գրման» պրոցեսը և սկսվի հակառակ պրոցեսը՝ այսինքն, տնտեսական շրջանառության մեջ մտցվեն այժմ չօգտագործվող հողերը։

---

2 «Հաշվետվություն՝ հողերը ըստ հանդակների և հողօգտագործողների բաշխման և այդ հողերի օգտագործման վերաբերյալ» առ 1-ը նոյեմբերի 1955 թ. և 1959 թ.։

Ներկայումս, երբ կոլտնտեսություններն ու սովխոզները տնտեսապես ամրապնդվել են և լավ են զինված տեխնիկայով, նրանք ի վիճակի են իրենց ուժերով կատարել հողային ֆոնդի վերականգնման և նրա ավելի լավ օգտագործման հետ կապված շատ միջոցառումներ։ Դրանում նրանց մեծ օգնություն է ցույց տալիս պետությունը, որը զգալի կապիտալ ներդրումներ է կատարում ոռոգման նպատակով։ Այս կապակցությամբ մեր ռեսպուբլիկայում նախատեսվում է յոթնամյա պլանի առաջադրանքից բացի, լրացուցիչ կերպով ոռոգել ևս 62 հազար հեկտար նոր հողեր և ջրարբիացնել 70 հազար հեկտար արոտավայր։

Սակայն, եթե նոր հողերի ոռոգումը և ջրարբիացումը կապված է լրացուցիչ ներդրումների հետ, որը հիմնականում կատարում է պետությունը, ապա խոտհարքների և արոտավայրերի բերքատվության բարձրացումը և նույնիսկ անհարմար հողերի հաշվին սրանց տարածությունների որոշ ավելացումը հնարավոր է կատարել հիմնականում կոլտնտեսությունների և սովխոզների սեփական ուժերով։

Ռեսպուբլիկայի արոտավայրերի զգալի տարածությունն ունի ցածր բերքատվություն և պատկանում է 3-րդ կամ 4-րդ կատեգորիայիս։ Ոչ ռացիոնալ օգտագործելը, անասունների անսիստեմ արածացնելը, առանձին զանգվածների մեծ բեռնվածությունը վերջիվերջո հանգեցրել են այն բանին, որ արոտավայրերը փոխակերվել են «ոչ-պիտանի» հողերի կատեգորիայի մեջ։

Ինչպես նշվում է ՍՄԿՊ ծրագրի նախագծի մեջ, կայուն և բարձր բերք ապահովելու, գյուղատնտեսությունը բնության տարերային ուժերի վնասակար ներգործությունից ազատելու համար և հողի բերքատվությունը խիստ բարձրացնելու նպատակով, մի շարք ուրիշ միջոցառումների կիրառման հետ մեկտեղ անհրաժեշտ է «սիստեմատիկ պայքար մղել հողերի ջրային և հողմային էռոզիայի դեմ»։

Մեր ռեսպուբլիկայում կան օգտագործումից դուրս հանված ցածր արդյունավետ արոտավայրերի զգալի տարածություններ, որոնք համապատասխան միջոցառումների կիրառումով նորից հնարավոր է մտցնել գյուղատնտեսության շրջանառության մեջ։ Այդ միջոցառումները, որոնք պահանջվում են խոտհարքների և արոտավայրերի բարելավման և ռացիոնալ օգտագործման համար, բավականին մանրամասնորեն մշակված են Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության Անասնաբուծության և անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի մարգագետինների ու արոտավայրերի բաժնի կողմից։ Սակայն դրանք դեռևս թույլ են կիրառվում կոլտնտեսություններում, չնայած այդ նպատակով առանձնապես մեծ ծախքեր չեն պահանջվում։ Այնպիսի հասարակ միջոցառումներ, ինչպես արոտավայրերը քարերից մաքրելը, չիմերի, վնասատու մոլախոտերի ու թունավոր բույսերի ոչնչացումը կարող ենք կիրառվել յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ և սովխոզում։ Նրանց համար մատչելի է նաև հողի մակերեսային բարելավման այնպիսի միջոցների իրագործում, ինչպես, օրինակ, խոտերի լրացուցիչ ցանքը, փոցխումը, պարարտացումը, այնուհետև արոտավայրերի ռացիոնալ օգտագործումը. այդ կպահանջի մի քանի տարվա ընթացքում անասունների արածացման արգելումը այն հողամասերում, որոնք ենթակա են էռոզիային։

Նշված միջոցառումների տնտեսական էֆեկտիվությունը ապացուցված է մի շարք կոլտնտեսությունների ու սովխոզների այդ ուղղությամբ կուտակված փորձով։ Խոտարույսերի լրացուցիչ ցանքը, պարարտացումը և այլ բարելա-

վումները զգալիորեն բարձրացնում են խոտհարքների ու արոտավայրերի բերքատվությունը, իսկ արածացման արգելումը մի քանի տարով՝ նպաստում է բուսածածկի վերականգնմանը։

Անասնաբուծական և անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի փորձը ցույց է տվել, որ 1 հեկտարին 10 և ավելի տոննա գոմաղբ տալու դեպքում (ալպյան գոտում 6 տարին, իսկ մյուս գոտիներում չորս տարին մեկ անգամ), խոտհարքների և արոտավայրերի բերքատվությունը բարձրանում է 1,5-ից մինչև 2 ցենտներ՝ մտցված յուրաքանչյուր տոննա գոմաղբի հաշվին։ Ըստ որում խոտի և արոտային կերի որակը խիստ կերպով բարձրանում է։ Գոմաղբահեղուկի և սուպերֆոսֆատի համատեղ օգտագործման շնորհիվ բնական մարգագետինների և արոտների բերքատվությունը կրկնապատկվում է[3]։

Այս միջոցառումների կիրառումը կարևոր է ոչ միայն կերի արտադրությունն ավելացնելու, այլև հողի էրոզիայի դեմ պայքարելու տեսակետից։ Ցանովի մարգագետինների և արոտավայրերի ստեղծումը, քարերի հավաքումը և խոտերի ցանքը նպաստում են լանջերի ճմակալմանը։ Այդ տեսակետից հետաքրքիր է Գորիսի շրջանի կոլտնտեսությունների փորձը։ 1959 թվականին, լանջերում տարածված 170 հեկտար չօգտագործվող հողերի վրա, առանց վարելու, շրջանի կոլտնտեսությունները ցանեցին կորնգան և բարձր բերք ստացան։ Շրջանի կոլտնտեսությունները որոշեցին առաջիկա երեք տարում այս եղանակով գյուղատնտեսական շրջանառության մեջ մտցնել ոչ պակաս քան երկու հազար հեկտար այժմ չօգտագործվող հողեր, որ հնարավորություն կտա խոտի հավաքը շրջանում ավելացնել 20—30 տոկոսով։

Անհրաժեշտ է կանգ առնել նաև հետևյալ հարցի վրա։ Մի շարք շրջաններ ունեն սահմանափակ տարածությամբ արոտավայրեր և դրա հետևանքով արոտավայրերի բեռնվածությունը շատ բարձր է։ Նույնիսկ ռեսպուբլիկայում, ամբողջությամբ վերցրած՝ արոտավայրերն ունեն գերբեռնվածություն։ Արոտավայրերի գոյություն ունեցող բերքատվության պայմաններում մեկ հեկտարը վրա պետք է ընկնի ոչ ավել քան 0,6—0,7 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, մինչդեռ փաստորեն արածացվում է 1,2-ից մինչև 1,3 գլուխ (վերածվող, կամ պայմանական միավորներով)։ Հատկապես գերբեռնված են ամառային այն արոտավայրերը, որոնք ամրացված են Արարատյան դաշտավայրի շրջաններին՝ Սաղկունքի, Գեղամա լեռներում և այլն։ Էջմիածնի շրջանին ամրացված ամառային արոտավայրերի 1 հեկտարին ընկնում է մոտ 4 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, Հոկտեմբերյանի շրջանում՝ 5 գլուխ։ Արոտավայրերի մեծ բեռնվածության հետևանքով նրանք ոտնակոխ են արվում, ընկնում է նրանց բերքատվությունը, ուժեղանում են էրոզիոն պրոցեսները, որը վերջին հաշվում հանգեցնում է հողածածկի քայքայմանը և զրկում նրան բնական բերրիությունից։ Այսպես, օրինակ, Կոտայքի շրջանի Ողջաբերդ գյուղի մոտակա արոտավայրերում անասունների ոչ չափավոր արածեցման հետևանքով հողածածկը լիովին քայքայվել է, լանջերը գրեթե մերկացել են. այդ բոլորի հետևանքով առաջ են գալիս սելավային երևույթներ, որոնք սպառնում են Երևանին։ Խիստ էրոզիայի ենթարկված արոտավայրերի մեծ տարածություններ, նոանց գերբեռ-

---

[3] Ол. М. Агаобян. Обзор опытов по повышению продуктивности сенокосов и пастбищ Армянской ССР. Труды Армянского НИИ Животноводства и Ветеринарии. т. III, Ереван, 1958 г.

նրվածության պատճառով, գոյացել են լանջերում (Ապարանի շրջանի Ղարարոդաղ գյուղ) և հատկապես Զանգեզուրում (Մեղրու, Ղափանի և Կորիսի շրջաններում)։ Մյուս կողմից, մի շարք կոլտնտեսություններ, որոնք ունեն արոտավայրերի մեծ տարածություններ, օրինակ, Սիսիանի շրջանում, ի վիճակի չեն իրենց ուժերով կատարել նրանց ռացիոնալ օգտագործման հետ կապված անհրաժեշտ միջոցառումները, որը և հանգեցնում է այդ արոտավայրերի բերքատվության իջեցմանը։

Կոլտնտեսություններին բնական արոտավայրերով ապահովելու հարցերը պետք է հաշվի առնվեն գյուղատնտեսության ճիշտ տեղաբաշխման և մասնագիտացման ժամանակ, ինչպես նաև այս կամ այն շրջանում տնտեսության վարման գիտականորեն հիմնավորված սիստեմ կիրառելիս։ Այսպես, օրինակ, Արարատյան հարթավայրի կոլտնտեսություններում հարց կարող է գրվել անասնաբուծության ճյուղերի առավել էֆեկտիվ տեղաբաշխման մասին՝ նրանց ամրացված հողերը լավագույն կերպով օգտագործելու միջոցով։ Այս գոտու մի քանի շրջաններում (Հոկտեմբերյանի, Էջմիածնի) մեկ կոլտնտեսությանն ընկնում է 300 հեկտարից պակաս արոտավայր և բնական խոտհարքներ։ Անասնաբուծության կառուցվածքն այստեղ պետք է փոփոխության ենթարկվի այն հաշվով, որպեսզի ավելացվի տավարաբուծության տեսակարար կշիռը գերազանցապես կովերի մսուրային պահպանմամբ։ Մյուս կողմից, լեռնային շատ շրջաններում, (օրինակ, Սևանի ավազանում և այլն) արոտային էժան կերերի առկայությունը դեռևս անբավարար է հաշվի առնվում՝ տնտեսության մասնագիտացումը որոշելու և անասունների գլխաքանակը պլանավորելու ժամանակ։ Այսպես, Կամոյի շրջանում մեկ կոլտնտեսությանն ընկնում է 5 անգամ ավելի բնական արոտավայր, քան Էջմիածնի շրջանում, չնայած այդ երկու շրջաններում մթերատու անասունների գլխաքանակը (պայմանական գլուխներով) հավասար է։ Լեռնային շրջաններում անասնաբուծությանն ավելի մեծ ուշադրություն պետք է նվիրել, որովհետև արոտավայրերի օգտագործումը հենց այդ շրջանների կոլտնտեսությունների և սովխոզների կողմից տնտեսապես ավելի է արդարացվում, քան դաշտավարային շրջաններից այդ նույն արոտավայրերն անասուններ տեղափոխելը։

Առանձին դեպքերում կարող է հարց դրվել նաև արոտավայրերը, հատկապես պետական ֆոնդի հողերը, մի շարք շրջանների միջև վերաբաշխելու մասին։

Չօգտագործվող հողերի հաշվին արոտավայրերի ֆոնդի լայնացման հետ միաժամանակ, գյուղատնտեսական շրջանառության մեջ պետք է դնել նաև այն հողերի մի մասը, որոնք առաջներում բարձիթողի էին արված։ ՀԿՊ Կենտկոմի 8-րդ պլենումում (1961 թ. մարտին) նշվեց, որ 1960 թվականին ռեսպուբլիկայում բոլորովին չէր օգտագործվում 27 հազար հեկտար հող, որը կազմում էր նրա վարելահողերի ավելի քան 5 տոկոսը։ Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության հետագա զարգացման շահերը պահանջում են, որպեսզի այդ հողերը նորից յուրացվեն։ Անդրկովկասի գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցությունում (1961) նշվեց, որ հացահատիկային և կերային կուլտուրաների ցանքերը մեր ռեսպուբլիկայում գլխավորեն պետք է ավելացվեն ի հաշիվ չօգտագործվող վարելահողերի։ Հողաշերտի պահպանման համար, հատկապես լեռնային շրջաններում, նպատակահարմար է հիշյալ հողերի հիմնական մասը դնել բազմամյա խոտաբույսերի տակ, իսկ հացահատիկայինների

ցանքը կատարել բազմամյա խոտերի հետ շերտընդմիջ՝ էռոզիան կանխելու համար։ Ինչ վերաբերում է ռեսպուբլիկայում հացահատիկի արտադրության ավելացմանը, ապա դրա համար կարելի է գտնել ուրիշ հնարավորություններ։ Այս կապակցությամբ ուշադրության է արժանի այն հարցը, թե տնտեսապես ինչն է ավելի ձեռնատու. Արարատյան դաշտում լրացուցիչ կերպով յուրացնել 10—13 հազար հեկտար ոռոգելի հողեր՝ եգիպտացորենի անհրաժեշտ քանակի ստացում ստանալու նպատակով, թե՞ լեռնային շրջաններում հացահատիկի տակ դնել տասնյակ հազարավոր հեկտար հողեր։ Ըստ որում պետք է նկատի ունենալ, որ լեռնային շրջաններում հացահատիկի արտադրության ծախքերը համեմատաբար ավելի բարձր են լինելու՝ մեքենայացմանը խոչընդոտող հանգամանքների հետևանքով, և այն, որ այս չօգտագործվող հողերի յուրացման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել հակաէռոզիոն միջոցառումների կիրառման վրա։

Արարատյան դաշտավայրում եգիպտացորենի ցանքերի ավելացումը կնպաստի նաև այս գոտու կոլտնտեսությունների ու սովխոզների անասնաբուծության կերային բազայի ամրապնդմանը, մի բան, որը մեծ նշանակություն ունի նաև Երևանի բնակչությանը կաթնամթերքներ մատակարարելու գործում։

Հացահատիկի ավելացման կարևոր ռեզերվներից մեկն էլ պետք է լինի հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացումը։ Միաժամանակ, իհարկե, հնարավոր է այդ կուլտուրաների ցանքատարածությունների ավելացումն այն շրջաններում, որտեղ դրա համար պայմաններ կան։

Առաջիկա տարիներում ռեսպուբլիկայում նախատեսվում է լրացուցիչ կերպով յուրացնել մոտ 40 հազար հեկտար չօգտագործվող հողեր՝ նրանց վրա բազմամյա խոտաբույսերի ցանք կատարելու միջոցով։ Սակայն, ինչպես նշվեց ՀԿՊ Կենտկոմի 8-րդ պլենումում, այդ աշխատանքները չափազանց դանդաղ են ընթանում։

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր պլանի նախագծի համաձայն, նախատեսվում է գյուղատնտեսական շրջանառության մեջ մտցնել մոտ 100 հազար հեկտար նոր հողեր։ Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի հաշվարկներով այդ թիվը կարող է հասնել մինչև 200 հազար հեկտարի։ Անհրաժեշտ է ՍՄԿՊ Կենտկոմի Հունվարյան պլենումի որոշումների լույսի տակ մեկ անգամ ևս հաշվի առնել բոլոր հնարավորությունները, բացահայտել և օգտագործել բոլոր ռեզերվները, հաշվարկել առանձին միջոցառումների հետ կապված բոլոր ծախքերը՝ որոշելու համար նրանց տնտեսական էֆեկտիվությունը և դրան համապատասխան սահմանել հողերի լրացուցիչ յուրացման հետ կապված այս կամ այն աշխատանքների ժամկետները։

Հարկավոր է նաև նշել, որ մեր ռեսպուբլիկայում հողային ֆոնդը համեմատաբար թույլ է ուսումնասիրված։ Հողային ռեսուրսների օգտագործման տնտեսական էֆեկտիվության հարցերին մեզ մոտ դեռևս քիչ ուշադրություն է դարձվում, չնայած դրանով զբաղվում են շատ կազմակերպություններ և գիտահետազոտական ձեռնարկություններ (Գյուղատնտեսության և Ջրային տնտեսության մինիստրություններ, Հողագիտության, Գյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման, Անասնաբուծության և անասնաբուժական ռիտահետազոտական ինստիտուտներ և այլն)։ Հողային ֆոնդի ուսումնասիրման և նրա ռացիոնալ օգտագործման աշխատանքները թույլ են կոորդինացվում, շատ

նյութեր են կուտակվում, սակայն նրանք չեն ամփոփվում և չեն կենտրոնացվում մի տեղում։ Այսպես, օրինակ, Արարատյան դաշտում, որը մեր ռեսպուբլիկայի հիմնական գյուղատնտեսական գոտին է, ոռոգվող հողերը կազմում են նրա տերիտորիայի միայն 40 տոկոսը։ Իսկ թե ի՞նչ են իրենցից ներկայացնում մնացած հողերը, նրանց ո՞ր մասն է հնարավոր յուրացնել, և ի՞նչ միջոցառումներ են հարկավոր դրա համար, ինչպիսի՞ն կլինի այդ յուրացման տնտեսական էֆեկտիվությունը,—այս բոլոր հարցերը դեռևս անհրաժեշտ չափով մշակված չեն և լրացուցիչ ուսումնասիրության կարիք են զգում։

Հողի օգտագործման էֆեկտիվության կարևորագույն ցուցանիշներից մեկը՝ 100 հեկտար գյուղատնտեսական հանդակներին ընկնող գյուղատնտեսության մթերքների արտադրությունն է։ ՍՄԿՊ Կենտկոմի պլենումի որոշումներում բազմիցս ընդգծվել է, որ գյուղատնտեսության ճիշտ պլանավորումը պետք է նպաստի 100 հեկտար գյուղատնտեսական հանդակներից առավելագույն քանակով մթերքներ ստանալուն՝ արտադրանքի միավորին ընկնող աշխատանքի և միջոցների նվազագույն ծախսումներով։

Սակայն գյուղատնտեսական արտադրությունը ճիշտ և անսխալ պլանավորելու համար անհրաժեշտ է գիտենալ ոչ միայն օգտագործվող և չօգտագործվող հողերի քանակը, այլև նրանց որակը։ Հայտնի է, օրինակ, որ 100 հեկտար հողն Արարատյան հարթավայրում և որևէ լեռնային շրջանում, ասենք Ղուկասյանում, միանգամայն անհամարժեք են։ Կարելի է պնդել, որ Արարատյան հարթավայրում գյուղատնտեսության ընդհանուր պայմաններն զգալիորեն ավելի բարվոք են, քան լեռնային շրջաններում, սակայն դժվար է ասել, թե ինչ հարաբերակցության մեջ են նրանք գտնվում։ Դա պահանջում է հատուկ հետազոտություն։

Գյուղատնտեսության պլանավորման ժամանակ հատկապես կարևոր է հաշվի առնել առանձին գյուղատնտեսական գոտիների տնտեսական և բնական առանձնահատկությունները։ Լրիվ և ստույգ տվյալներ՝ տեղի բնական և տնտեսական պայմանների, գյուղատնտեսական հողերի քանակի և որակի, կոլտնտեսությունների և սովխոզների արտադրական առանձնահատկությունների վերաբերյալ միանգամայն անհրաժեշտ են գյուղատնտեսության ավելի լավ կազմակերպման համար, նրա կուլտուրայի բարձրացման համար, գյուղատնտեսական բարձր եկամտաբերություն ունեցող ձեռնարկություններ կազմակերպելու համար։

Այս պատճառով էլ մեզ թվում է, որ վաղուց արդեն հասունացել է ռեսպուբլիկայի հողերի գիտական հիմունքներով կազմակերպված, մանրազնին քանակական ու որակական հաշվառումը։ Անհրաժեշտ է արմատապես վերակառուցել հողային ռեսուրսների հաշվառումը, բաշխումն ու օգտագործումը։ Հողերի մանրազնին գույքագրման հետ միաժամանակ կարելի է անցկացնել նրանց տնտեսական գնահատումը, այսինքն՝ որոշել տարբեր բնա-տնտեսական պայմաններում գտնվող հողի յուրաքանչյուր հեկտարի համեմատական եկամտաբերությունը։ Դրա համար անհրաժեշտ է կատարել համախառն և մաքուր արտադրանքի հաշվարկներ։ Հեկտարի գնահատումն ըստ համախառն արտադրանքի հնարավորություն է տալիս որոշելու հողի հարաբերական արժեքը, իսկ մաքուր եկամուտի հաշվարկով որոշվում է նրա եկամտաբերության մակարդակը՝ հողային տարածության մեկ միավորի վրա։ Այդ հաշվարկների կատարման, ինչպես նաև հողերի տնտեսական գնահատման եղանակների որոշե-

լու գործին պետք է մասնակից լինեն գյուղատնտեսության էկոնոմիկայի մասնագետները։

Անհրաժեշտ է նշել, որ հողերի որակական գնահատումը շատ աշխատաբար գործ է։ Այն կպահանջի մի շարք մասնագետների միացյալ ջանքեր, բայց ինչպես ցույց է տվել մեր երկրի առանձին շրջանների, ինչպես նաև որոշ արտասահմանյան երկրների փորձը, դա շատ շնորհակալ միջոցառում է։ Մեր երկրում հողերի գնահատման անհրաժեշտությունը հատկապես սուր կերպով է զգացվում գյուղատնտեսության մեջ նոր տարածություններ յուրացնելու կապակցությամբ, այնպիսի հողերի, որոնք առաջ օգտագործվում էին միայն էքստենսիվ անասնապահության համար։ Այս կապակցությամբ Մոսկվայի համալսարանը Խոպանի երկրամասի որոշ շրջաններում անցկացրեց հողերի գնահատման որոշ աշխատանքներ։ Ուկրաինայում մեծ աշխատանք է կատարված հողերի քանակական ու որակական գնահատման ուղղությամբ (շուրջ 46 միլիոն հեկտարի վրա)։ Հետաքրքիր է նշել, որ կատարված բոլոր աշխատանքների արժեքը մեկ հեկտարի հաշվով այնտեղ կազմել է 2 ռուբլի (հին դրամով)։ Մեր ռեսպուբլիկայում աշխատանքների փոքր մասշտաբի և լեռնային ռելիֆի առանձնահատուկ պայմանների հետևանքով այդ ծախսերը որոշ չափով ավելի բարձր կլինեն։ Բայց հողերի գնահատման հետ կապված որոշ խնդիրներ մտցնելով Գյուղատնտեսության մինիստրության և Գիտությունների ակադեմիայի հողագիտության, Գյուղատնտեսության էկոնոմիկայի և կազմակերպման, ԳԱ Տրնտեսագիտության ինստիտուտի և Աշխարհագրության սեկտորի թեմատիկ պլանների մեջ, կարելի է այդ ծախսերը զգալիորեն կրճատել։

Հողերի տնտեսական գնահատմանը մեզ մոտ մինչ այժմ էլ բիչ ուշադրություն է դարձվել, չնայած այդ հարցի կարևորությանն ու անհրաժեշտությանը։ Դրա պատճառն այն է, որ շատ տնտեսագետներ այն կարծիքին էին, թե ՍՍՌՄ-ում, որտեղ գոյություն չունի հողի մասնավոր սեփականություն, նրա գնահատման կարիքը չկա։ Դա, իհարկե, ճիշտ մոտեցում չէ։ Կապիտալիստական երկրներում հողերի գնահատումն հիմնականում ծառայում է շահավետության նպատակներին, մինչդեռ մեզ այն անհրաժեշտ է շատ այնպիսի հարցերի լուծման համար, որոնք կապված են գյուղատնտեսության արտադրության պլանավորման, ինչպես նաև նրա հետագա զարգացման ուղղվների հայտնաբերման հետ։

Հողերի տնտեսական գնահատումը անհրաժեշտ է պլանային, մթերման օրգաններին, ինչպես նաև իրենց՝ գյուղատնտեսական ձեռնարկություններին։ Դրա հիման վրա հնարավոր է ոչ միայն ճիշտ որոշել գյուղատնտեսական արտադրության ծավալը, այլև միաժամանակ ճիշտ կազմել գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիայի պայմանագրերը։

Հողերի տնտեսական գնահատումը կօգներ կապիտալ ներդրումների պահանջի, նրանց օգտագործման էֆեկտիվության վերաբերյալ հաշվարկների, առաջավոր կոլտնտեսություններում արտադրության ձևը բերված մակարդակի, ինչպես նաև առանձին կոլտնտեսությունների հետ մնալու պատճառների ճիշտ վերլուծելուն և որոշելուն։ Դա չափազանց անհրաժեշտ է գյուղատնտեսության մասնագիտացման ու տեղաբաշխման, գյուղատնտեսության մեջ դիֆերենցիալ ռենտայի հաշվարկման ու նրա բաշխման համար։

Յուրաքանչյուր ռեսպուբլիկայում գյուղատնտեսության մինիստրության սիստեմում, համաձայն նրա նոր կառուցվածքի, նախատեսվում է կազմակեր-

պել հողերի պահպանության ու բարելավման, հողօգտագործման ու հողային ֆոնդերի պետական հաշվառման վարչություն։ Կասկածից վեր է, որ այդ վարչության ֆունկցիաները շատ ավելի լայն կլինեն, քան այդ մինիստրության մինչ այժմ գոյություն ունեցող Հողօգտագործման ու հողաշինարարության վարչության ֆունկցիաները։ Հենց այդ վարչությունն է, որ պետք է կազմակերպի և գլխավորի հողերի տնտեսական գնահատման աշխատանքները, ինչպես նաև միջոցներ մշակի նոր հողերի իրացման և եղած հողային ռեսուրսների օգտագործման բարելավման համար։ Այդ աշխատանքում պետք է ներգրավվեն գիտահետազոտական հիմնարկները, գյուղատնտեսական բարձրագույն հաստատությունները, ինչպես նաև կոլտնտեսություններն ու սովխոզները։

Հողերի տնտեսական գնահատումն իրագործելու ժամանակ պետք է լայն կերպով օգտագործվեն գյուղատնտեսական ձեռնարկությունների ու գիտական հիմնարկությունների ձեռք բերած նվաճումները։ Այդ գործում մեծ օգնություն ցույց կտան ռեսպուբլիկայի բոլոր շրջաններում գոյություն ունեցող փորձնական կայանները, որոնք կազմակերպվել են առաջավոր կոլտնտեսությունների ու սովխոզների բազայի վրա, բանի որ այդ կայանների խնդիրներից մեկն էլ հողերի բերրիության պահպանումն ու բարելավումը և հողային քարտեզների կազմումն է։

Հողերի տնտեսական գնահատման եղանակների մշակման ժամանակ պետք է առավել չափով հաշվի առնել ռեսպուբլիկայի առանձնահատկությունները, նրա լեռնային ռելեֆը, դրա հետ կապված հողերի ու բուսականության բաշխման ուղղաձիգ գոտիականությունը, կլիմայական պայմանների բազմականությունը, հողային մասիվների կտրտվածությունը, աշխատանքային մի շարք պրոցեսների մեքենայացման դժվարությունները և այլն։

Վերոհիշյալի հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի 1961 թվականի Հունվարյան պլենումի առաջադրած խնդրի կատարման և գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բնակչության պահանջմունքներից գերազանցող չափերով շեշտակիորեն ավելացնելու համար մեծ նշանակություն ունի հողային ռեսուրսների օգտագործումը յուրաքանչյուր կոլտնտեսությունում և սովխոզում։ Այդ հարցն առանձնակի սուր նշանակություն է ստանում Հայաստանի սակավահողության պայմաններում։

2. Հողի ռացիոնալ օգտագործումը պահանջում է ոչ միայն գոյություն ունեցող հողային ֆոնդերի օգտագործման զգալի բարելավումը, այլև նրանց զգալի լայնացումը՝ ի հաշիվ նոր հողերի յուրացման։ Գյուղատնտեսական օգտագործման հողերի ֆոնդը ռեսպուբլիկայում կարող է ընդարձակվել ինչպես վարելահողի տարածության ավելացման հաշվին՝ նոր հողերի ոռոգման և չօգտագործվող հողերի հերկման միջոցով, այնպես էլ բնական խոտհարքների և արոտավայրերի ջրարբիացման միջոցով և համապատասխան միջոցառումների կիրառմամբ այն արոտավայրերի և խոտհարքների վրա, որոնք նախկինում դուրս են գրվել ցածր բերքատվության պատճառով։

3. Ռեսպուբլիկայի գիտահետազոտական ձեռնարկությունները և գյուղատնտեսական բուհերը պետք է մեծ օգնություն ցույց տան Գյուղատնտեսության մինիստրությանը, կոլտնտեսություններին և սովխոզներին՝ երկրի հողային պաշարների առավել լրիվ և ճիշտ օգտագործմանն ուղղված միջոցառումների կիրառման գործում։

4. Նկատի ունենալով, որ գյուղատնտեսության զարգացումն զգալի չափով կախված է կոլտնտեսությունների և սովխոզների մշակվող հողերի քանակից և որակից, մեր ռեսպուբլիկայում առաջիկա տարիներում անհրաժեշտ է ծավալել հողի տնտեսական գնահատման աշխատանքները։ Հողերի որակային հաշվառումը և տնտեսական գնահատումն անհրաժեշտ է գյուղատնտեսության բնագավառում շատ կարևոր տնտեսական հարցերի լուծման համար։ Այդ միջոցառումները մեծապես կնպաստեն գյուղատնտեսության արտադրության լրացուցիչ հնարավորությունների հայտնաբերմանը և օգտագործմանը՝ ի բարօրություն մեր ժողովրդի։